5 ԹԵՄԱ Հայկական պետականության նախարարական շրջանը

Դաս 52 Տարածաշրջանի քաղաքական դրությունը V- VI դարերում: Մարզպանական Հայաստանը և Պարսկաստանը

Գիտեք, որ...

- *Մարզպանական Հայաստանը հիմնականում ընդգրկում էր Մեծ Հայքի Այրարատ, Տուրուբերան, Սյունիք, Վասպուրական, Մոկք և Տայք (հաճախ՝ նաև Արցախ) նահանգները՝ 134 հազար քառ. կմ (Արցախի հետ՝ շուրջ հազար քառ. կմ) տարածքով:*

- *Մինչև V դարի կեսը մարզպանի գահանիստը Արտաշատն էր, այնուհետև՝ Դվինը:*

Լրացուցիչ նյութեր

Աղվանք մարզպանության ստեղծումը

Պարսից Պերոզ թագավորի (459–484 թթ.) ժամանակ ստեղծվում է մեկ այլ հայաբնակ մարզպանություն՝ Աղվանք մարզպանությունը, որի կազմում

ընդգրկվում են Հայքից անջատված Գարդման–Ուտիք, Արցախ նահանգները և կովկասյան ցեղերով բնակեցված Կովկասյան լեռների ու Կասպից ծովի միջև ընկած տարածքները: Մարզպանությունը կոչվում է Աղվանք, որովհետև վերացված Աղվանից թագավորությունը ամենամեծն էր տարածքով, նաև ի տարբերություն մարզպանության կազմի մեջ մտնող կովկասյան ցեղերի, հայոց այդ երկրամասի բնակչությունը նստակյաց էր, վստահելի և ուներ զարգացման բարձր մակարդակ: Կովկասյան ցեղերով բնակեցված տարածքները հայերով բնակեցված Գարդման–Ուտիքին և Արցախին կցելը նպատակ ուներ թույլ չտալ զուտ հայերից բաղկացած նոր մարզպանության ստեղծում: Այդպես կբացառվեր նրանց միասին հանդես գալը պարսից իշխանությունների դեմ:

Մարզպանական Աղվանքում հայ նախարարները շարունակում էին ազատ ու անկախ լինել իրենց տիրույթներում: Նրանք ունեին իրենց զորքը, ներքին կարգ ու կանոնը և միայն մարզպանի միջոցով հարկ էին վճարում պարսից արքունիքին: Աղվանքում գործում էր տեղական իշխանատոհմ «Առանշահիկ» տիտղոսով: Հավատքի հարցում ենթարկվում էին հայոց կաթողիկոսական կենտրոնին:

Դաս 53 Վարդանանց պատերազմը: Ավարայրի ճակատամարտը

Գիտեք, որ...

- *Պարսից Հազկերտ II արքայի հրամանով Հայոց այրուձին 442 թ. Վարդան Մամիկոնյանի հրամանատարությամբ կռվել է քուշանների (հոներ) դեմ:*

- *Ավարայրի ճակատամարտում զոհված մարտիկները դասվել են Հայ առաքելական եկեղեցու տոնելի սրբերի շարքը և կոչվում են Սբ Վարդանանք:*

- *Մասնագետներից ոմանք Վարդան Մամիկոնյանի գերեզմանը փնտրել են Ավարայրի դաշտում, ոմանք՝ Նախիջևանի Աստապատ գյուղի մոտ՝ Կարմիր վանքին կից սրբավայրում, Արագածի լանջերին:*

Լրացուցիչ նյութեր

Եղիշեն Ավարայրի ճակատամարտի մասին

Եղիշեն որպես ճակատամարտի ականատես, Ավարայրի ճակատամարտի մասին գրում է. «...պատրաստվելուց հետո կողմերը սրտմտությամբ ու մեծ բարկությամբ լցված, գազանային զորությամբ հարձակվեցին իրար վրա: Կողմերի բարձրացրած աղմուկն ու աղաղակը լսվում էր ինչպես ամպերի ձայնյուն: Ձայների դղրդյունից շարժվում էին լեռների քարանձավները: Բազմաթիվ սաղավարտների ու զրահի փայլը կտրում էր արեգակի ճառագայթների շողը: Բազմաթիվ սրերի շողշողումից ու նիզակների ճոճանքից կարծես կրակ էր թափվում երկնքից: Ով կարող է նկարագրել ահարկու ձայների այս մեծ տագնապը, իրար զարկվող վահանների թնդյունը և աղեղների լարերի ձայնյունը, որոնք խլացնում էին բոլորին»:

Դրվագներ Ավարայրի ճակատամարտից, 1482 թ., Շարակնոց, հեղինակ՝ Կարապետ Բերկրեցի

Դաս 54 Վահանանց պատերազմը: Նվարսակի պայմանագիրը: Ինքնիշխանության վերականգնումը Արևելյան Հայաստանում

Գիտեք, որ...

- *Վահան Մամիկոնյանը Վարդան Մամիկոնյանի եղբոր որդին է: Նրա հայրը զոհվել էր Ավարայրի ճակատամարտում:*
- *Վահան Մամիկոնյանը աքսորից վերադարձրել է Ղազար Փարպեցուն, ով նրա պատվերով և հովանավորությամբ գրել է «Պատմություն Հայոց» երկը:*

Լրացուցիչ նյութեր

Ղազար Փարպեցին Վահան Մամիկոնյանի մասին

Պատմիչ Ղազար Փարպեցին Վահան Մամիկոնյանի մասին գրում էր, որ խելացի, իմաստուն և բարի մարդ է: Այս հատկությունների շնորհիվ նա մեծ հեղինակություն է ձեռք բերում իր շրջապատում: Պարսից արքունիքում ևս նրա մասին լավ կարծիք էր ձևավորվել պատանդության տարիներին: Սակայն ինչպես հաճախ է պատահում, հայտնվում են մարդիկ, որոնց դուր չի գալիս նրա հեղինակության աճը և պարսկասեր նախարարները սկսում են պարսից արքայի մոտ վատաբանել նրան: Իմանալով այդ մասին, Վահան Մամիկոնյանը նվերներով մեկնում է Տիզբոն և պարսից թագավոր Պերոզի ընդունելությանն է արժանանում: Պերոզը սիրալիր ընդունելություն է ցույց տալիս, այնուհետև նշանակում է Հայաստանի հարկահավաք՝ օգնական նշանակելով Վրիկ անունով մի ասորու:

Պերոզի վստահությունն ավելի մեծացնելու նպատակով, Վահան Մամիկոնյանը առերես կրոնափոխ է լինում: Որոշ ժամանակ անց Վահան Մամիկոնյանին հարկ է լինում նորից մեկնել Տիզբոն, քանի որ այս անգամ օգնական նշանակված Վրիկն է ամբաստանում՝ ասելով, որ հավաքված ամբողջ ոսկին Վահան Մամիկոնյանը չի տալիս պարսից արքունիքին, այլ պահում է իր մոտ՝ կամ երկրից հեռանալու ու Հունաց կողմն անցնելու, կամ զորք հավաքելու և ապստամբելու համար: Այս անգամ ևս Վահան Մամիկոնյանին հաջողվում է գնալ ու Պերոզին համոզել, որ ինքը ապստամբելու միտք չունի, քանի որ Պարսկաստանը մեծ և ուժեղ երկիր է, որին հաղթելը դժվար է: Նա իր հետ Պարսկաստան է տանում նաև հավաքած ամբողջ ոսկին և տալիս Պերոզին: Նորից շահելով Պերոզի վստահությունը, Վահան Մամիկոնյանը վերադառնում է Հայաստան՝ շարունակելով մնալ հարկահանի պաշտոնում:

Դաս 55 Տիեզերական ժողովները և Հայոց եկեղեցին: Քաղկեդոնի ժողովը և ընդհանրական եկեղեցու պառակտումը: Դվինի եկեղեցական ժողովները

Գիտեք, որ...

- *Տիեզերական ժողովներին մասնակցել են ոչ միայն եպիսկոպոսներ, այլև երեցներ, քահանաներ, սարկավագներ, ովքեր, սակայն, չեն ունեցել վճռական ձայնի իրավունք, այլ հանդես են եկել որպես եպիսկոպոսների օգնականներ կամ խորհրդականներ:*

- *Պատմությունը վկայում է, որ Եփեսոսի տիեզերական ժողովին հրավիրված է եղել նաև Հայոց Սահակ Պարթև կաթողիկոսը, սակայն զբաղված լինելով՝ չի կարողացել անձնապես մասնակցել:*

Լրացուցիչ նյութեր

Շահապիվանի եկեղեցական ժողովը

443 թ. Շահապիվանում տեղի ունեցած եկեղեցական ժողովում ընդունվում են խստագույն կանոններ՝ ուղղված աղանդավորական շարժման մասնակիցների դեմ ի դեմս, մծղնեականության: Ըստ սահմանված կանոնների՝ կտրում էին շարժման մասնակիցների ոտքերի ու ձեռքերի ջլերը, աղվեսադրոշմ էին դնում ճակատին, ինչը նշանակում էր, որ բոլորը պետք է խուսափեին ու հալածեին նրանց: Այս ամենից հետո նրանց գցում էին բորոտների մոտ՝ ապաշխարելու: Նրանց մեծահասակ երեխաները կիսում էին ծնողների ճակատագիրը, իսկ մանկահասակներին եկեղեցին վերցնում ու հատուկ դաստիարակության էր տալիս:

Շահապիվանի ժողովի կանոններով պատժվում էին նաև նրանք, ովքեր թաքցնում կամ չէին հայտնում նրանց մասին: Եթե թաքցնողը քահանա է, ապա կտրում էին նրա ոտքերի ու ձեռքերի ջլերը, իսկ եթե բարձրաստիճան եկեղեցական կամ ազնվական է, ապա միայն նզովում էին: Ինչպես նկատում ենք, ավելի թեթև պատիժներ էին սահմանված բարձրաստիճան եկեղեցականների ու ազնվականների համար:

Դաս 56 Դրությունը Արևմտյան Հայաստանում VI դարում: Պարսկա-բյուզանդական պատերազմը և Հայաստանը

Գիտեք, որ...

- *387 թ. Հայքի բաժանումից հետո հռոմեացի պատմիչները (Պրոկոպիոս Կեսարացի) Բյուզանդիային ենթակա Հայքի համար օգտագործում են Արմենիա, իսկ Պարսկաստանին ենթակա մասի համար՝ Պերսարմենիա անունները:*

- *Հուստինիանոս կայսեր օրոք նրա արքունիքում բարձր տեղ էր զբաղեցնում հայազգի Նարսես զորավարը, ով բյուզանդական զորքի գլուխն անցած վերանվաճել Իտալիան:*

- *591 թ. Հայաստանի բաժանումից հետո Հայ եկեղեցին թուլացնելու նպատակով Բյուզանդիայի Մավրիկիոս կայսրն Ավանում (այժմ՝ Երևանի հյուսիսարևելյան մասում) հիմնել է քաղկեդոնական հակաթոռ կաթողիկոսություն:*

Լրացուցիչ նյութեր

Հայերի դավադրությունը

Հայերի ատելությունը Հուստինիանոսի ու բյուզանդացիների հանդեպ այնքան մեծ էր, որ հայ զորավարները և այլ մեծամեծներ 548 թ. դավադրություն կազմակերպեցին նրա դեմ: Այն կազմակերպել էր զորավար Արշակ Արշակունին: Նրան միացան նաև Արտավան Արշակունին, ով սպանված Հովհաննես Արշակունու որդի էր, և այլք: Դավադրությունը բացահայտվեց, քանի որ այդ մասին իմացել էր մի հույն երիտասարդ և մատնել նրանց: Բյուզանդիայի կայսրը բավարարվեց Արտավան Արշակունուն պաշտոնանկ անելով, բոլորին ձերբակալելով ու որոշ ժամանակ պահելով ոչ թե բանտում, այլ պալատում: Այս ամենը այն պատճառով, որ Արտավան Արշակունին մեծ զորավար էր: Նա հետագայում մեծ ծառայություններ մատուցեց կայսրին՝ նվաճելով Աֆրիկան:

Դաս 57 Արաբական նվաճումները և Հայաստանը: Հայաստանը արաբական խալիֆայության կազմում: Հակաարաբական ապստամբությունները

Գիտեք, որ...

- *Թեոդորոս Ռշտունին և նրա որդի Վարդը արաբական 7 հազարանոց զորախմբի օգնությամբ հաղթել են Հայաստան խուժած բյուզանդական զորքերին և հասել մինչև Տրապիզոն:*

- *750 թ. արաբ զորավար Էլ Մանսուրը մեծ զորաբանակով մտնում է Հայաստան և պահանջում, որ հայերը վճարեն 747-750 թթ. ապստամբության տարիների չմուծված հարկերը: Հարկ էին վերցնում նույնիսկ այդ տարիներին մահացած մարդկանց հարազատներից:*

Լրացուցիչ նյութեր

Ղևոնդ պատմիչը 748-750 թթ. արաբների դեմ տեղի ունեցած ընդվզումների մասին

Այն ժամանակ, մեր երկրի բոլոր նախարարները խորհեցին դեն նետել հնազանդության լուծը, ապստամբել և ազատվել Իսմայելի հպատակությունից: Այս խորհուրդը տվել էր Գրիգորը՝ Մամիկոնյան տոհմից... Իսկ Հայաստանի բոլոր նախարարները, գալով Աշոտ իշխանի մոտ, համոզում էին նրանց կողմնակից դառնալ և միաբանել անօգուտ խորհրդին: Իշխանը տեսնելով նախարարների և նրանց հեծյալների միաբանությունը, նախարարներին մեկ մեկ կանչելով՝ բազում խոսքերով թախանձում էր չձեռնարկել այս ապիրատ գործը: Նա ասում էր. «Ո՜վ եղբայրներ մեր զորքերը սակավաթիվ են... չենք կարող դիմադրել նրանց զորքերին և ոչ էլ մեր երկիրը փրկել վիշապի բերանից, այլ միայն տանջանքի ու վտանգի կենթարկենք նրան...»:

Հայաստանի նախարարները չկամեցան ընդունել իմաստուն խրատը, այլ անդրադարձ լինելով՝ ասացին. «Եթե չմիաբանես մեր որոշումին, քո զորքից ոչ ոք չի մնա քեզ հետ, չենք կարող ժուժկալել այն տագնապներին, որոնց մեջ է մեր Հայոց երկիրը»: Այդ ժամանակ Աշոտ իշխանը ակամայից համաձայնեց միաբանել Գրիգորի և այլ նախարարների հետ և իրար հետ ուխտի դաշինք կնքեցին տերունական խաչի միջնորդությամբ՝ հավատարմորեն պահպանելու

միաբանության սերը:

Որոշ ժամանակ անց միաբանությունից հեռացավ Աշոտ իշխանը և նախարարներից ոմանց հետ եկավ հասավ Բագրևանդ գավառի Հազր գյուղը՝ կամենալով միաբանել Իսմայելի (արաբ պաշտոնյա) որդիների հետ: Այն ժամանակ նախարարները, ովքեր նրա հետ էին, նենգելով զեկուցեցին չարասեր Գրիգորին այդ մտադրության մասին: Իսկ սա կամենալով գլուխ բերել վաղուց մտածված դավադրությունը, շուտափույտ կազմեց իր զորքը և նրա հետևից հետամուտ լինելով՝ ագռավի նման լեռների վրա ընթանալով, գիշերը վրա հասավ և պաշարեց նրա հանգստյան կայանը... Բռնելով նրան՝ հրամայեց աչքի լույսից զրկել:

Դաս 58 Հայոց եկեղեցին VII -VIII դարերում

Գիտեք, որ...

- *Վրաց Կյուրիոն կաթողիկոսն ընդունել է քաղկեդոնականություն, և 608 թ. Վրաց եկեղեցին բաժանվել է Հայոց եկեղեցուց: Մինչ այդ Վրաց եկեղեցին ճանաչում էր Հայ առաքելական եկեղեցու գահերեցությունը:*

- *Սուրբ Հռիփսիմեի եկեղեցին կառուցվել է 618 թ. Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսը: Այն ընդգրկված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում:*

Լրացուցիչ նյութեր

Զվարթնոց տաճարի կառուցման մասին

Պատմիչ Սեբեոսը գրում է. «Այնտեղ (կաթողիկոսը) կառուցեց մի եկեղեցի՝ երկնավոր Զվարթնոց անվամբ, որը նշանակում է երկնային զինվորների (զվարթունների, կամ հրեշտակների) բազմություն, որոնք երևացել են Սուրբ Գրիգորին տեսիլքի ժամանակ...»: Այսինքն՝ «զվարթնոց» նշանակում է զվարթունների, հրեշտակների դաս: Ավելի քան երեք դար կանգուն մնալուց հետո Զվարթնոց տաճարը փլուզվել է, մնալով անկրկնելի և առեղծվածային: XI դարի սկզբին Անիում Զվարթնոցի օրինակով կառուցվել է Գագկաշեն Սուրբ Գրիգոր եկեղեցին, որի մանրակերտը հայտնաբերվել է պեղումների ժամանակ: Զվարթնոցի տաճարի պատկերը օգտագործվել է նաև եվրոպական միջնադարյան ճարտարապետության մեջ՝ կապված Համաշխարհային ջրհեղեղի ու Նոյյան տապանի թեմաներով կոթողներում: Այսպես, Նոյան տապանն է պատկերված Փարիզի Սեն Շապել (XIII դ.) եկեղեցու հարթաքանդակներից մեկում: Իսկ Նոյան տապանի ու Հայաստանի կապը ցույց տալու համար տապանի մեջ պատկերվել է Զվարթնոցի եռահարկ տաճարը (VII դ.):

Դաս 59 Հայոց եկեղեցին և աղանդավորական շարժումները (մծղնեականներ, բորբորիտներ, պավլիկյաններ):

Գիտեք, որ...

- *Բորբորիտների հալածանքն այն պարտավորություններից էր, որ ստանձնել էր Սահակ Պարթևը Թեոդոս Բ կայսեր և Կոստանդնուպոլսի Ատտիկոս պատրիարքի հրամանով՝ Հայաստանի արևմտյան հատվածում մայրենի գիրը տարածելու և հոգևոր գործունեություն ծավալելու համար:*

- *Հայկական առասպելի համաձայն՝ հոռոմների մի կայսր պավլիկյաններին հալածել է, և նրանք փախել են Կովկասյան լեռներից այն կողմ: Նրանց գլխավորել է Մարե անունով մի կախարդ կին:*

Լրացուցիչ նյութեր

Պավլիկյանները

Պավլիկյանները ժխտում էին անդրշիրիմյան կյանքը, եկեղեցական ծեսերը: Նրանք չէին ընդունում Հին Կտակարանը, իսկ Նոր Կտակարանից ընդունում էին որոշ դրույթներ: Հերքում էին Մարիամի աստվածածին լինելու գաղափարը, Քրիստոսին վերագրում էին միայն աստվածային հատկանիշներ, մերժում էին հարություն առնելու գաղափարը և այլն: Նրանք նաև գտնում էին, որ պետք է անիծել խաչը ու չխաչակնքել: Նրանք չէին ընդունում հաղորդությունը, մկրտությունը և պատարագը, որոնք մեծ շահույթ էին ապահովում եկեղեցու համար: Պավլիկյանները մերժում էին նաև սրբերի պաշտամունքը, սրբապատկերները և եկեղեցիները: Նրանք գտնում էին, որ ով հավատում է աստծուն, կարող է առանց միջնորդի կապվել նրա հետ, որտեղ ցանկանա, որովհետև աստված ամեն տեղ է ու ամենազոր: Իրենց հավաքատեղիները նրանք անվանում էին աղոթարան, իրենց հոգևորականներին՝ ուղեկիցներ, նոտարներ: Նրանք գտնում էին, որ բոլոր մարդիկ հավասար են և նրանց հոգևոր առաջնորդները հագուստով և ապրելակերպով չէին տարբերվում աղանդի մյուս անդամներից:

Դաս 60 Տնտեսությունը, առօրյա կյանքն ու կենցաղը, հասարակական հարաբերությունները Հայաստանում V-IX դարերում:

Գիտեք, որ...

- *Գոյություն են ունեցել պարսպապատ և ոչ պարսպապատ կամ բաց քաղաքներ: Պարսպապատ քաղաքներ էին այն քաղաքները, որոնք ունեին միջնաբերդ և պարսպապատ էին: Այդպիսի քաղաքներ էին Վանը, Դվինը, Կարինը և այլն: Անպարիսպ ու միջնաբերդ չունեցող քաղաքները կոչվում էին բաց քաղաքներ: Բաց քաղաքներ էին Արծնը, Ոստանը, Արծկեն:*

- *Արմինիա գրությամբ ոսկե և արծաթե դրամներ են հայտնաբերվել շատ երկրներում, որոնք տարածվել են արաբական այլ դրամների հետ: Արմինիա գրությամբ ոսկե և արծաթե դրամների հարուստ հավաքածու կա Հայաստանի պատմության թանգարանում:*

Լրացուցիչ նյութեր

Արաբների վայրագությունների մասին

Երկրի ներքին առևտրի զարգացման հետևանքով Դվինում, Վանում, Արծնում, Նախիջևանում և այլ քաղաքներում առաջանում են շուկաներ ու վաճառատեղեր: Առևտրական ճանապարհների խաչմերուկներում և խոշոր քաղաքներում կազմակերպվում էին տոնավաճառներ, որտեղ իրենց արտադրանքն էին վաճառում ոչ միայն հայ արհեստավորներն ու գյուղացիները, այլև օտարերկրյա ու հայ առևտրականները: Առևտրական հարաբերությունների զարգացման հետևանքով առանձին մարդկանց մոտ կուտակվում էին մեծ դրամական միջոցներ, որն այնուհետև ներդրվում էր վաշխառության, արհեստագործության ու գյուղատնտեսության մեջ: Արաբական տիրապետության շրջանում երկրի տնտեսությունը և հայ ժողովրդի վիճակն էլ ավելի վատթարացավ տարեց տարի ավելացող ծանր հարկերի պատճառով: Արաբ հարկահանները մեկը մյուսին գերազանցելով, բռնություններով ու ճնշումներով հարկ էին վերցնում բոլորից, նույնիսկ մահացածներից: Այդ մասին վկայություններ ունի Ղևոնդ պատմիչը (VIII դար): Մինչանից հետո նրան փոխարինած Աբդուլլա խալիֆը իր եղբորը ուղարկում է Հայոց աշխարհ հարկ հավաքելու: «Սարսափելի ձևով նա սկսեց չարչարել

որբերին ու այրիներին, հարկ պահանջելով մահացածների համար: ... Քահանաներին ու աստվածային խորանի մյուս պաշտոնյաներին ենթարկեց խոշտանգումների, պահանջելով հայտնել մահացածների անունները: Խոշտանգում էր նաև բնակիչներին՝ յուրաքանչյուր մարդուց պահանջելով զուգի՝ /արծաթ դրամ/: Մարդիկ իրենց վերջին ունեցվածքը տալով, չէին կարողանում ելք գտնել վճարման համար, որ կարողանան ազատվել կտտանքից, կախաղանից և դառը տանջանքից: Դրա հետևանքով շատերը փախչում, թաքնվում էին երկրի այրերում ու քարանձավներում»:

Ազնվականները ևս զերծ չէին մնում հարկահանների հալածանքներից: «Եվ տոհմիկ ազնվականները կամա, թե ակամա, ընծա էին բերում ձիեր ու ջորիներ, պատվական հանդերձներ, ոսկյա ու արծաթյա իրեր, որպեսզի կարողանան լցնել վիշապի բերանը, որը հարձակվել էր երկրի վրա՝ երկիրն ավերելու նպատակով»:



Դվինի կենտրոնական հրապարակը:
Գծանկարը՝ Ա. Պատրիկի